# ՆԿԱՐԻՉ, ՈՒՄ ՆԵՐՇՆՉԱՆՔՆ ԱՍՏՎԱԾ ԷՐ



Երբ մեկ առ մեկ թերթում ենք Ռուդոլֆ Խաչատրյան-արվեստագետի կյանքի էջերը, թվում է՝ մեծ արտիստը հենց նրան է նկատի ունեցել՝ գրելով այս տողերը. անձ, ով տասնամյակներ շարունակ «Հայաստանը միշտ և հանապազ իր հոգում կրելով»՝ ապրել ու արարել է Ռուսաստանում: Վառ ու խորն անհատականություն լինելու շնորհիվ տաղանդավոր նկարիչը կարողացավ ստեղծել իր ուրույն ձեռագիրը՝ դառնալով ՀՀ ժողովրդական նկարիչ, ապա Ռուսաստանի Գեղարվեստի Ակադեմիայի թղթակից անդամ: Նա եղավ մեր ժամանակների ամենասիրված ու գնահատված վարպետներից մեկը և երազում էր իր 70-ամյա տարեդարձը նշել Երևանում... Սակայն Հայաստանի արվեստասերներին վիճակված չէր նրա ներկայությունը վայելել...

Հոկտեմբերի 4-ին Երևանի քաղաքային պանթեոնում ծաղկել էր նկարչի՝ խաչքարի պատկերով շիրիմը. հավաքվել էին Ռուդոլֆ Խաչատրյանի արվեստը ճանաչողներ ու գնահատողներ, նկարիչներ, ՌԴ-ից ժամանել էին նրա բազմանդամ ընտանիքը, ընկերները...

Դուդուկահարները հնչեցնում էին «վիթխարի ծիրանի փողը», որից դուրս եկող մեղեդիները, խառնվելով խնկի ծխի քուլաներին, բարձրանում էին երկինք: Իսկ Վարպետին շարունակում էին ծաղիկներ նվիրել:

- Այս գերեզմանը հենց իր նախագիծն է եղել: Նա շատ հավատավոր ու հայրենասեր անհատ էր: Եվ վերջին երկու աշխատանքները եղել են հայկական թեմատիկայով,- ասաց նկարչի որդին՝ Վսևոլոդը:

- Զարմանալի է, որ Ռուդոլֆ Խաչատրյանն այսքան շատ ընկերներ է ունեցել. նույնիսկ մահից հետո էլ ուզում են նրա հետ ընկերություն անել: Այս շիրիմը նրա նոր ճանապարհի սկիզբն է,- նշում էին ներկաները: Եվ ահա այդ բազմաթիվ ընկերների հետ միասին հայ արվեստաբանները պատրաստում են նկարչի նոր ալբոմը...

Հաջորդ օրը՝ հոկտեմբերի 5-ին, ժամանակակից արվեստի է ֆանտաստիկ պարագաներով, ամբողջական ու կատարյալ դարձնում կերպարը, որը ապրում է Գեղեցիկի ու Վեհի աշխարհում՝ «Աբու Լալա Մահարի», «Կնոջ դիմանկար», «Լեզվաբան Մելքումյանի դիմանկարը», «Ինքնանկար» ... Մի անբացատրելի երկնային բան կա նրա աշխատանքներում. երևի դա հենց այն ոգին է, որ միշտ ամենայն անկեղծությամբ դրսևորում էր բոլոր հարցազրույցների, հաղորդումների ժամանակ. «Իմ սեղանի գիրքը Աստվածաշունչն է, որը ամեն երեկո ընթերցում ու վերընթերցում եմ, առանց որի հնարավոր չէ ճշմարիտ մարդու ու արվեստագետ լինել»,- սա էր Ռուդոլֆ Խաչատրյանի՝ որպես բարեպաշտ քրիստոնյա ապրելու ու ստեղծագործելու բանաձևը:

Չափ ու սահման չուներ նաև նրա համեստությունը, երբ խոսքը վերաբերում էր մեծություններին գնահատելուն:

- Երբ առաջին անգամ այցելեցի Էրմիտաժ, բոլոր ժամանակների հանճարների գործերը տեսնելուց հետո թանգարանից դուրս եկա անզորացած, փշրված... Իմ ներսում մոտակա կամրջից ցած նետվելու անհագ ցանկություն էր ծնվել, քանի որ նույն հարցն էի անվերջ ինքս ինձ տալիս. «Ո՞վ ես դու, որ Ռեմբրանդտից հետո վրձին առնես ձեռքդ»: Հետո հասկացա, որ մեռնել պետք չէ, հարկավոր է նկարել, բայց նրանք ինձ համար միշտ բարձունք մնացին»,- մի առիթով ասել է նկարիչը: Սա կոկետություն չէ, այլ մարդկային վսեմ հոգու, խոնարհության դրսևորում: Եվ այս հրաշք երիտասարդը, անցյալի մեծերին չափանիշ ընդունելով, կարողացավ կայանալ որպես Ռուդոլֆ Խաչատրյան՝ ողջ կյանքում իրեն Լեոնարդո դա Վինչիի ու Երվանդ Քոչարի աշակերտը համարելով:

- Ռուդոլֆ Խաչատրյանը երբեք մանուկ չի եղել. նա միանգամից անցավ կլասիկ արվեստին: Աստվածաշունչ մատյանը գիտեր հրաշալի: Ասում էր. «Ես տեսել եմ Աստծուն և աղոթել»: Իսկ նման խոսքը նա հենց այնպես չէր արտաբերի: Այդ բորբ հավատը ես պաշտականության կրողը: Հենց նրա հետ շփումների արդյունքում ընտրեցի մասնագիտությունս:

Ի դեպ, շատ տարիներ առաջ, երբ Երվանդ Քոչարը ստեղծում էր իր «գեղանկարչությունը տարածության մեջ», աշակերտին՝ Ռուդոլֆ Խաչատրյանին, ասել է. «Դու դեռ կգաս դրան, բայց քո ճանապարհով»: Կատարվեց ուսուցչի մարգարեությունը. նկարչի «խորհրդապաշտականության կրող լինելն» արտացոլվեց նրա փիլիսոփայական գործերում, որոնք նա կոչել է «բազմաչափ օբյեկտներ»: Դրանք իրենցից ներկայացնում են քանդակի, գեղանկարի և գրչանկարի մի զարմանալի միաձուլում: «Քանդակների» հիմքում տեսողականորեն խաչն է, բայց նրանք իրենց էությամբ ձգտում են գունդը: Նա, կերպարի ներքին աշխարհը արտաքին դարձնելով, որոնում է «մարդու բանաձևը»: Այս ստեղծագործություններին մի մեծ հոդված է նվիրել արվեստաբան Լևոն Աբրահամյանը, որը զետեղվել է դեռևս 1997թ.-ին լույս տեսած «Ռուդոլֆ Խաչատրյան՝ բազմաչափ օբյեկտներ» ալբոմում: Նա այդ գործերն առաջին հայացքից նմանեցնում է տիեզերական ծառին՝ համընդհանուր մի կառուցվածք, որը կազմակերպում է տիեզերքը, բաժանում այն երեք ուղղաձիգ աշխարհների (լուսատուների, թռչունների և երկնաբնակների վերին աշխարհ, ստորերկրյա արարածների ներքին աշխարհ և մարդկանց ու երկրային կենդանիների միջին աշխարհ) և չորս հորիզոնական աշխարհների՝ երկրի չորս կողմերի: Այնուհետև նկատում է մի էական տարբերություն. «Բանն այն է, որ եթե տիեզերական ծառը բաժանում է աշխարհը,

ԼՈ

ՄԱՆՉԵՍԹՐՈՒ
ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈ

Երրորդությու
ռեջուր խմող և հե
նի չէ քրիստոնյա

Բրիտանիայի
նկար, որում պա
ների ոչ ստանդա
ռեգիոն» ԼԳ-ը:

Կտավի վրա
հանուր պատկեր
րանների հետ: Ս
թերցողը, ում մե
իրականում կեն
կազմված ընտա

«Albertus»-ը
որեն պատկերում
րապես արևմտյա
փոփոխություննե

«Albertus»-ի կ
չուպը՝ արյունը, հ
տին պլանի կամ
կը, կապում է եր
Գնորգն է: «Albert
մեջ էլ թաքնված
պանքների մեջ չի

ՊԱՊԸ ՄԵԿՆԱ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱ

Հովվապետը
Համաշխարհ
արժեքների կու
դիկտոս XVI պա
Սինոդի նիստի բ

«Ներկայումս,
նում. որ փողը կ
նշանակություն
այն Աստծո խոսք
մանքը նրանց,
«հաջողության, կ

ՎԱՏԻԿԱՆԸ ՄՏ

Դա տեղի է ու
Ինտերպոլի՝
ցած նիստում Վ
թյան անդամ: Ի
վին մասնակից
Վատիկանի նահ
Ռենատո Բոկար
առմամբ շուրջ 6
Ինտերպոլի
նը, որը շվեյցար
վորումն է պետո

ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ